ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/101 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով խոհանոցային կահույքի /3 դպրոցների/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **11.08.2025թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Անահիտ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/101» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից «Նոար գրուպ» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 01.08.2025թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (մինչև 2025 թվականի օգոստոսի 8-ը ներառյալ) չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Նոար Գրուպ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Նոար Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան

_____ Արման Երանոսյան

_____ Անահիտ Հակոբյան

_____ Լիանա Խառատյան /քարտուղար/